

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱՊԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒ-
ԹԻՒՆ, ՄԱՍՆ Ա.

Ա. Էջմիածին 1908. VI, 218 էջ, գինն է մի րուբլի.

Հայոց եկեղեցու պատմութեան դասագրքի կարիքը—
այդ բոլորովին անվիճելի է—շատ մեծ է, Այնպէս որ երբ
անցեալ աշնանը մտմուլի մէջ էլ հրատարակուեց, թէ կա-
րապետ ծ. վարդապետը հրատարակութեան է տուել իւր-
քազմամեայ աշխատանքների և ուսումնասիրութիւնների
պառեղ եկեղեցական պատմութիւնը, շատերը սրտատրով
հրճուանքով և ուրախութեամբ սպասում էին այդ գրքի
ամբողջութեան լոյս տեսնելուն։ Որովհետեւ էլ ուրիշ ումբից
պէտք է սպասէր հայ հոգևորականութիւնն ու ուսուցչու-
թիւնը հայրենի եկեղեցու պատմութիւնը, եթէ ոչ նրա-
նից, որ անդրանիկը լինելով Էջմիածնի աստուածաբաննե-
րից, միևնոյն ժամանակ խոշոր մտաւոր ոյժի և կարողու-
թեան տէր, ամեն յարմարութիւն ունեցել էր Հայոց եկե-
ղեցու պատմութիւնը ուսումնասիրելու և հրատարակելու
երկար ժամանակ դասաւանդած լինելով այդ առարկան։
Մայր Աթոռի ձեմարանում Սակայն, չնայելով այդ բոլորին
այսօր մեր առաջ է գրուած միայն մի կիսակատար գործ,
Հայոց եկեղեցու պատմութեան Ա. մասը, մինչեւ Դուինի
Բ. ժողովը հ54-ին։ Դժգոհութեամբ արձանագրում ենք
այդ փաստը և ցաւում, որ այսուհետեւ էլ անորոշ ժամա-
նակ հայ ուսուցիչները Հայոց եկեղեցու պատմութիւն
աւանդելիս մոլորուած պիտի մնան և չիմանան, թէ ինչ
տան իրենց աշակերտների ձեռքը, էլ չեմ ասում, թէ որ-
տեղից իրենք հանեն նիւթը։ Բայց այդ իրողութեան հետ

ստիպուած ենք հաշտուել, որովհետեւ Կարսապետ ծ. վարդապետը յառաջաբանի մէջ կտրական կերպով յայտնում է, որ մեր առաջ դրուած գիրքը այսպէս կիսատ էլ պիտի մնայ և եթէ ինքը ժամանակ ու յարմարութիւն ունենայ կրկին եկեղեցական պատմութեամբ զբաղուելու, պէտք է սկսէ ռուրա շարունակութեան փոխարէն» աւելի լուրջ և բազմակողմանի, ճոխ ծանօթութիւններով հարուստ և աւելի կատարեալ մի աշխատութիւն Հայոց եկեղեցու պատմութեան մտսին» Ծանօթանանք ուրեմն մեր առաջ դրուած աշխատութեան հետ առ այժմ։

Ամենից առաջ պէտք է նկատենք, որ այս գիրքը յարմարութիւն չունի իբրև դասագիրք գործածուելու, ոչ միայն այն պատճառով, որ կիսատ է, այլ և որովհետեւ հեղինակը չէ աշխատել տալ որոշ, հաստատուն իրողութիւններ ու թուեր, որոնք միայն պէտք են աշակերտին, ինչպէս ընդունում է նաև ինքը Կարապետ ծ. վարդապետը, այլ իւր գրուածքի մէջ մեծ տեղ է տուել քննադատութեան, կողմնակի դատողութիւններին և կարծիքներին։ Այսպէս որ այս աշխատութիւնը աւելի յաջողութեամբ կարող են գործ ածել ուսուցիչները և այնտեղից նիւթ ու տեսակէտ փոխ առնել իրենց դասաւանդութեան համար։

Հայոց եկեղեցու պատմութիւնը կ. վ. բաժանում է երեք դարերի. ա) Հին կամ կաղմակերպութեան դար, մինչև Դուինի Բ. ժողովը 554-ին (ներկայ գրքի նիւթը), բ) Միջին կամ Մաքառման դար՝ Դուինի Բ. ժողովից մինչև հայրապետական աթոռի փոխադրութիւնը Ա. Էջմիածին (1441) և գ) Նոր կամ Վերակենդանութեան դար, աթոռի փոխադրութիւնից մինչև մեր օրերը Կարելի է անշուշտ լուրջ կերպով վիճել կ. վ-ի հետ, թէ ինչու օրինակ Դուինի առաջին ժողովով (506-ին) չի փակւում Ա. շրջանը, եթէ այդ բաժանման համար դեր է կատարում դաւանական խնդիրը և Հայոց մասնակցութիւնը դաւանական վէճերի մէջ, կ. վ-ի դրած բաժանման օգտին խօսում է այստեղ միայն ոյն հանդամանքը, որ 552-ից Հայոց թուականն է սկսում, բայց այդ հանդամանքը միայն արտաքին մի-

բան է և գաւանութեան համար նշանակութիւն չունի։ Զպէտք է մոռանալ, որ Հայոց եկեղեցու ոչ միայն այն ժամանակի, այլ և ներկայ գաւանութեան տեսակէտից շատ աւելի նշանակութիւն ունի Մանազկերտի ժողովը 726-ին, որ մի տեսակ բաժանման կէտ է Հայոց եկեղեցու անցեալ և յետագայ գաւանութեան համար, և ուրեմն նոյնչափ, դուցէ և աւելի, իրաւունքներով կարելի էր Հայոց եկեղեցու պատմութեան Ա. մասը փակել Մանազկերտի ժողովը. մանաւանդ որ Դուինի ժողովից անմիջապէս յետոյ և նրա հետ կապուած մի մեծ, Հայոց եկեղեցու վրայ էլ ազգեցութիւն ունեցող, պառակտումն է ոկուում Հայոց և հարևան Սիւնեաց, Աղուանից և Վրաց եկեղեցիների մէջ, որ առանձնացնել և միջին շրջան տանել այնքան էլ յարմար չպէտք է համարուի, քանի որ Ա. մասը կ. վ.-ը կազմակերպութեան գար է կոչում և Հայոց ազգային եկեղեցու ինքնատիպ կազմակերպութիւնը գնում այդ շրջանում։

Նոյն ձեռով արտաքին մի հանգամանքի՝ աթոռի փոխադրութեան վրայ է հիմունմ կ. վ.-ը միջին և նոր շրջանի բաժանումը, վերակենդանութեան գար անուանելով այն, թէև 1441-ից յետոյ գեռ երկար ժամանակ վերակենդանութեան նշոյլ անգամ չենք տեսնում։ Հայոց եկեղեցու մէջ, որ բաւական ուշ է սկսում և կապ չունի հայրապետական աթոռի հետ, այլ դրսից է գալիս Բայց պէտք է խոստովանել, որ աւելի յարմար թուական գտնել չի կարելի, եթէ առհասարակ անպատճառ պէտք է Հայոց եկեղեցու պատմութիւնն էլ ընդունուած ձեր համաձայն Յ շրջանի բաժանել, որ մեր կարծիքով կարեոր չէ։ Այդպիսի բաժանումները պէտք է հիմնուին յեղաշրջումն առաջ ըեւրող դէպքերի վրայ, իսկ այդպիսի ոչ մի դէպք չունինք մեր եկեղեցու պատմութեան մէջ Մանազկերտի ժողովից այս կողմ։

Հայոց եկեղեցու պատմութեանն անցնելուց առաջ կ. վ. երկու գլխում մեզ մանրամասն տեղեկութիւն է տալիս ա) Քրիստոնէութեան տարածման առաջին Յ դա-

բերում և ընդհանրական եկեղեցու հաստատութեան մասին (Էջ 6—23) և բ) ընդհանրական եկեղեցու վարչական դաւանական և ծիսական գրութեան մասին Գ. գարի վերջին (23—47):

Այդ ընդարձակ հատուածները խոկապէս ընդհանուր եկեղեցական պատմութեան են վերաբերում. այդտեղ խօսք է լինում Երուսաղէմի մայր համայնքի, հրէայ և հեթանոս քրիստոնեաների, Ստեփանոսի և Պողոս առաքեալի գործունէութեան, առաքելական ժողովի, միւս առաքեալների գործունէութեան, աւետարանի տարածման նպաստող հանդամանքների, քրիստոնէութեան դէմ հանած հալածանքների, հնագոյն աղանդների (յատկապէս Գնուտիկականութեան և Միհշանականութեան), առաքելական հայրերի, ջատագովների և Աղէքսանդրիայի գպրոցի (մինչեանդամ Իրենէոսն ու Օրիգենէոն էլ իւր «վեցիջեանով մէջ են գալիս), քրիստոնէութեան տարածման ընդհանուր երեսյթի, զանազան երկրներում՝ ունեցած յաջողութեան (Մայր Երկիր, Մերձաւոր Արե Ելք, Փոքր Ասիա, Արեմուտք, Կապադովկիա, Միջագետք, Պոնտոս, Պարսկաստան), եկեղեցու վարչական կազմակերպութեան, նոր կտակարանի և հաւատոյ կանոնի, ծէսերի, տօների և վերջապէս վարք ու բարքի մասին: Բայց այդ բոլորը, պէտք է ասենք, որ այդպիսի ընդարձակութեամբ չեն կարող մտնել Հայոց եկեղեցու ոչ ընդարձակ և ոչ մանաւանդ համառօտ պատմութեան մէջ, իսկ դասագրքի մէջ նոցա համար միայն 5—6 երես տեղ կարող է լինել և ոչ թէ 40 երես: Սակայն քանի որ այս գիրքը դասագիրք լինել չէ կարող, այլ լոկ ընթերցանութեան և նիւթ հաւաքելու համար պիտի ծառայէ, ընդհանուր եկեղեցական պատմութեան այդ ընդարձակ հատուածն էլ օգտակար կարող է լինել ընթերցողների համար:

Գ. զլիսի վերնագիրն է «աւանդութիւններ և հետքեր նախ քան ո. Լուսաւորիչ Հայաստանում» Եղած քրիստոնէութեան» (Էջ 47—60), որի մէջ նախ պատմւում են բաւական ընդարձակ կերպով աւանդութիւնները և ապա՝

ցոյց է տրուում՝ նրանց պատմական արժեքը և ի վերջոյ յիշւում՝ են բան պատմական վկայութիւնները։ Ամբողջ նիւթը այստեղ էլ այն ձեռվ է տրուած, որ միայն ուսուցչին և պատմութեանը լաւ տեղեակ անձնաւորութեանը մատչելի լինել կարող է։

Ա. մասի երկրորդ շրջանը՝ քրիստոնէութեան հասաւատուելն է Հայաստանում և նորակազմ եկեղեցւոյ մաքառումը ներքին և արտաքին թշնամիների դէմ։

Դ. գլուխ. Հայոց գարձն ի քրիստոնէութիւն, ուր նախ պարզւում է ժամանակի քաղաքական գրութիւնը, ապա նկարագրուում Հայոց ներքին կեանքն ու հեթանոսական կրօնը, որպէսզի աւելի հասկանալի դառնայ Տրդատի և Գրիգոր Լուսաւորչի միջոցով քրիստոնէութեան պետական կրօն դառնալն Հայաստանում (Էջ 60—81)։ Աւշագրութեան արժանի է այս մասում յատկապէս էջ 73—75, ուր կ. վ. աշխատում է ո. Գրիգորի Ճեռնագրութեան առթիւ պարզել Հայոց հայրապետական աթոռի կապը Կեսարիայի հետ և այն ուղիղ եղբակացութիւնն է հանում, հիմնուելով իւր նախկին ուսումնասիրութիւնների վրայ, որ ստորագասութիւն Հայոց եկեղեցու Կեսարիայի աթոռին չէ եղել, թէն այդպէս են ընդունում Գելցերի հետևողութեամբ արևմտեան շատ գիտնականներ։

Գլուխ Ե. Հայոց եկեղեցին ո. Գրիգոր Լուսաւորչի և Տրդատի անմիջական յաջորդների օրով մինչև ներսէս Մեծ (81—90)։

Գլուխ Զ. Ներսէս Մեծ (Էջ 90—104), ուր, ինչպէս և առհասարակ, մեծ տեղ է տուած ժամանակի քաղաքական հանդամանքների նկարագրութեանն ու նրանց ունեցած ազդեցութեանը եկեղեցական կեանքի վրայ։ Գլուխ վերջում համառօտ կերպով պատմուած է Զաւէն, Շահակ և Ասպուրակէս կաթուղիկոսների հայրապետութեան մասին։

Գլուխ Է. Սահակ և Մեսրոպ նոցա վերանորոգչական գործունէութիւնն ու դպրոցը (104—125)։

Է. գլուխ նիւթը հայրապետական աթոռի վիճակն է

Ա. Սահակից և Մաշթոցից յետոյ, Շտհապիվանի ժողովն
ու մծնէութիւնը, և ապա ա. կրօնական պատերազմը իւր
հետեւանքներով (էջ 125—156):

Թ. գլուխը բ. կրօնական պատերազմի, Գիւտ և Յով-
հան Մանդակունի կաթուղիկոսների մասին է (էջ 156—
186): Ինձ թւում է, թէ այստեղ էլ քաղաքական հանգա-
մանքների նկարագրութեանն աւելի տեղ է տուած, քան
թէ կարեռ էր:

Ժ. գլուխ. Հայոց եկեղեցւոյ մասնակցութիւնը դա-
ւանական վէճերի մէջ և բռնած գիրքը. Դուինի ժողով-
ները (էջ 186—218). Յատկապէս ինձ համար այս գրքի
ամենահետաքրքրական հատուածը:

Այս գլուխմ ամենից առաջ բաւական ընդարձակ
տեղեկութիւն է տրւում Նեստորական և Քաղկեդոնա-
կան վէճերի, Եփեսոսի ժողովների, Քաղկեդոնի ժողովի
և միաբնակութեան վէճերի մասին մինչև Զենոնի Հենո-
տիկոնի հրատարակութիւնը (482) և հաստատութիւնը:
Ապա կ. վ. անցնում է Բարգէն կաթուղիկոսի թղթե-
րին և Դուինի ա. ժողովին և պարզում այն ուղիղ հայե-
ցակէտը, թէ Դուինի ա. ժողովում Քաղկեդոնը բացար-
ձակ բանագրանքի տակ չէ դրուել, որովհետեւ Հենոտիկոնի
ընդունելութեամբ արգէն նա լոելեայն դատապարտուած
էր, այլ Դուինի ա. ժողովի նիւթը եղել է զանազան եկե-
ղեցական, գուցէ և քաղաքական խնդիրների հետ, Հենո-
տիկոնի ընդունելութիւնն ու Նեստորականների խնդիրը,
որոնցից հետու լինելուն իբրև ապացոյց Պարսից քրիս-
տոնեաների պատգամաւորների ձեռքն է տրւում Բարգէնի
ա. թուղթ կոչուածը: Ապա կ. վ. խօսում է Բարգէնի
աննշան յաջորդների մասին, որոնց մէջ այժմ, շնորհիւ-
տողերիս գրողի ասորական աղբիւրներից առպարէզ հանած
տեղեկութիւնների, առանձին նշանակութիւն է ստանում
Քրիստափոր Ա., Բագրեանդի Տիրառին գիւղից, իբրև
միաբնակութեան, նշանաւոր գործիչ և Հայոց եկեղեցու
իրաւասութեան սահմաններն ընդարձակող, որովհետեւ նա
ձեռնագրել է շատ ասորի եպիսկոպոսներ: Ուշագրութեան

արժանի են նաև Քրիստափորի նախորդ Սահակ Բ. Հարքացու մասին կ. վ.-ի ասածները, յատկապէս նրա օրով գումարուած մի ժողովի մասին, որի կանոնները մնացել են մեր կանոնագրքերում:

Անցնելով Հայոց եկեղեցու յարաբերութեանն ասուրիների հետ ներսէս Բ.-ի օրով (էջ 200 շար.), կ. վ. ամենից առաջ Յուլիանոս Հալիկառնացու և Սեւերոս Անտիոքացու վարդապետութիւններն է նկարագրում, Հայոց եկեղեցու գիրքը դաւանական խնդրում որոշելու համար, և ապա մէջ բերելով թէ ասորիների գրած թղթի վարդապետութիւնը և թէ Հայոց պատասխանի մէջ եղածը, միանում է մեր այն կարծիքին—առանց անունը տալու, ինչպէս և առհասարակ կ. վ. համարեա ամենեին չի յիշում՝ գիտնականների անունները—, թէ այս ասորիները Յուլիանոս Հալիկառնացու ուսման հետեւզ են եղել և Հայերն էլ ներսէս Բ.-ի օրով համաձայնութիւն են յայտնել այդ ուսմանը՝ այն համարելով նախկին ուղղափառ հայրերի վարդապետութեան հետեւղական զարգացումը:

Գլքոյկի վերջաբանն է Դուինի Բ. ժողովը, նրա պատական նշանակութիւնն ու հետեանքները, ուր մեծ հմտութեամբ ճիշտ կերպով պարզուած են Դուինի Բ. ժողովի հետ կապուած բոլոր խնդիրները՝ նեստորականութիւն, քաղկեդոնականութիւն, մծղնէութիւն, աղգային եկեղեցիների կազմութիւն, Հայոց թուականութեան սկիզբ, քաղաքական հանդամանքներ և եկեղեցական նշանաւոր գործիչներ (Պետրոս Սիւնեցի և Մերշապուհ Մամիկոնէից): Եատ ցաւում ենք, որ այստեղ վերջանում է կ. վ.-ի Հայոց եկեղեցու պատմութիւնը:

Վերջացնելով մեր համառօտ գրախօսականը կ. վ.-ի, Հայոց եկեղեցու պատմութիւն աւանդող ուսուցիչների համար այսուհետեւ միանդամայն անհրաժեշտ, գրքի մասին, յանձնաբարում ենք այն յատկապէս նաև բոլոր հայ հոգեորականներին: Հայոց եկեղեցու պատմութեան ամենագժուար շրջանը կղտնեն նոքա այստեղ, առաջին անդամ, ժամանակակից պատմական գիտութեան արդիւնքների

Համաձայն և ուղիղ ու սուր պատմական ըմբռնողութեամբ նկարագրուած։ Միայն մի ջերմ ցանկութիւն կարեօր ենք համարում աւելացնել մեր կողմից, թող կ. վ. իւր ազատ միջոցը գործադրէ այս գրքի շանունակութեան վրայ, որին մեզ հետ, յոյս ունինք, շատերն են սպասում։

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ.

Երիտասարդ Թիւրքիա. գրեց Ս. Սապան-Գիլեան Պարիզ 1908 թ., զինն է 50 սանտիմ. Հրատարակութիւնն Հնչակեան կուսակցութեան № 16:

Հեղինակի այս գրքոյն ուշադրութեան արժանի է յատկապէս ներկայ պայմաններում. յուլիսի 11-ի բարեփոխութեամբ երիտասարդ թուրքերի կուսակցութիւնը առաջնակարգ գործոն հանդիսացաւ Օսմաննեան պատութեան մէջ Թուրքիայի բաղդը, նորա յաջողութիւնն ու ներքին խաղաղութիւնը կապուած է մասամբ և այս կուսակցութեան բաղդի հետ։ Այսօր նրանք են զեկավարող ուժերը և երեխ նրանք կլինեն նաև նոր պետութեան և սահմանադրական օրէնստուութեան հոգին ու տէրը. Մանօթանալ այս շարժման ծագման և գարդացման պատմութեան հետ ինքնըստինըեան շահեկան է, բայց ծանօթանալ նրա ձգտումներին, առաջնորդող գաղափարներին և հայեացքներին մեզ համար կենսաթրթիռ մի խնդիր է յատկապէս, թէ այդ կուսակցութիւնը ինչպէս է նայում ազգայնական խնդիրների վերայ։

Հեղինակը մեզ պատմական համառօտ ծանօթութիւններ տալուց և Միդհատեան սահմանադրութեան ֆիասկօն նկարագրելուց յետոյ, քննութեան է ենթարկում երիտասարդ թուրքերի սխալներն ու պակասութիւնները, երիտասարդ թուրքերը ոգեսորուած Օսմաննեան պետութեան գաղափարով, անուշադիր են թողնում ազգայնական խնդիրները, իսկ պետութիւնը, ընդհանուր բարեկարգութեան խնդիրը հանգէս է բերել այն ժամանակ, երբ այս կամ այն ազգի համար ինքնավարութեան հարց է ծագել։ Հայ, արաբ, մակերու-